ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Լեվան ՍՊԸ-ն ՇՄԱՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
9	Նշանակությունը՝ նախատեսված գրասենյակային և վարչական տարածքներում օգտագործման համար: Կառուցվածքը՝ մեկտեղանոց, փափուկ նստատեղով և թիկնակով, երկու բազկակալներով, առանց անիվների: Նստատեղը և թիկնակը՝ էրգոնոմիկ կառուցվածքով, փափուկ լցանյութ երեսպատված սև գույնի արհեստական կաշվով: Բազկակալները՝ երկու հատ, մետաղական հենակառուցվածքով և փափուկ հենման հատվածներով: Բազկակալների բարձրությունը հատակից՝ 660 – 680 մմ: Հիմքը և հենակառուցվածքը՝ կլոր հատույթով (հիմնական հատվածներում տափակեցված) մետաղական խողովակից պատրաստված, ճկված, սահնակաձև (U-աձև) կառուցվածքով, քրոմապատ մակերեսով, խողովակների բաց հատվածներում պետք է տեղադրված լինեն խցափակիչներ, իսկ հատակին հպվող հատվածները պետք է հագեցած լինեն պաշտպանիչ խցափակիչներով կամ հատուկ ներդիրներով (պլաստիկե կամ ռետինե), որոնք կկանխեն հատակի մակերեսի քերծվածքները, վնասվածքները և կապահովեն աթոռի կայուն տեղադրումը: Նստատեղի և թիկնակի երեսպատումը՝ արհեստական կաշի, գույնը՝ սև Ընդհանուր չափերը՝ լայնությունը՝ 630 մմ, խորությունը՝ 650 մմ, բարձրությունը՝ 980 մմ: Նստատեղի չափերը՝ լայնությունը՝ 510 մմ, խորությունը՝ 500 մմ, հատակից նստատեղի բարձրությունը՝ 480 մմ: Առավելագույն թույլատրելի բեռնվածությունը՝ առնվազն 120 կգ: Երաշխիքային ժամկետը՝ առնվազն 365 օր՝ ապրանքի մատակարարման օրվանից: Մատակարարման պայմանները՝ ապրանքի մատակարարումը, բեռնաթափումը, հավաքումը (եթե ապրանքը ունի հավաքման կարիք) և տեղադրումը համապատասխան սենյակում կամ պահեստում, ինչպես նաև կարգաբերումները իրականացվում է Վաճառողի ուժերով և իր

	միջոցների հաշվին: Աթոռը պետք է լինի կայուն, չճոճվի, չտատանվի և սովորական օգտագործման պայմաններում պահպանի իր կառուցվածքային ամբողջականությունը: Մետաղական և երեսպատման հատվածները պետք է լինեն առանց ճաքերի, սուր եզրերի, վնասվածքների, անհարթությունների և այլ տեսանելի թերությունների: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված և գործարանային արտադրության:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Леван ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՇՄԱՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
9	